Մրցույթ՝ ԿԶՆԱԿ հիմնադրամի ՄԿՈՒԶԱԿ հիմնարկի ՄԿՈՒ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի բաժնի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՄԿՈՒ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի մասնագետի հիմնական գործառույթներն են.

1) Հետևել mkuzak.am և vetarmenia.am կայքերի բնականոն աշխատանքներին,
2) Իրականացնել կայքերի ֆունկցիոնալ կառավարում (նոր դաշտերի և բաժինների ստեղծում, համալրում),
3) Իրականացնել կայքերի բովանդակության կառավարում (տեղեկատվության հավաքագրում և համալրում, տեղադրում),
4) Իրականացնել կայքերի դիզայնի փոփոխություններ,
5) Կազմել հեռավար դասընթացների փաթեթներ՝ տրված նյութերի հիման վրա,
6) Տեղադրել հեռավար դասընթացները vetarmenia.am կայքում,
7) Վարել կենտրոնի Facebook, LinkedIn, և Youtube էջերը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Բարձրագույն կրթություն,
- Գրավոր և բանավոր հայերենի գերազանց իմացություն,
- Օտար լեզուներ իմացություն (անգլերեն/ռուսերեն),
- Տեքստերի խմբագրման և սրբագրման կարողություն,
- Վիդեոների մոնտաժման կարողություն,
- Ժամանակային խիստ սահմաններում աշխատելու կարողություն,
- Խմբային աշխատանքի ունակություն և պատրաստակամություն,
- Ստեղծագործական մտածողություն և խնդիրներ լուծելու կարողություն,
- Սոցիալական էջերի վարման փորձ,
- Կայքերի հետ աշխատանքային փորձ:

Կցել նաև վերջին 5 տարիների մասին կարճաժամկետ դասընթացների մասնակցության մասին վկայականները:

Դիմումների ընդունման ժամկետն է՝ 30.01.2023 – 7.02.2023 թթ.:

Աշխատավարձի չափը՝ 190.000 ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) գրավոր դիմում՝ (ձև 1, կցված է) նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է,
2) անձնագրի պատճենը,
3) ինքնակենսագրություն (ձև 2, կցված է),
4) թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
5) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
6) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ։

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացվում են միայն էլեկտրոնային փոստի միջոցով (էլ. փոստ ncvetd@gmail.com)։

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր։

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 07.02.2023 թ.։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային և հարցազրույց։ Հարցազրույցի փուլը կկայանա ս/թ. փետրվարի 10-ին՝ ժամը 11⁰⁰-ին, հեռավար ձևաչափով /մրցույթի փատաթղթային փուլը անցած հավակնորդների էլեկտրոնային հասցեներին հարցազրույցի համար կուղարկվի համապատասխան հղումը/։

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (033) 57-21-07 հեռախոսահամարով, աշխատանքային օրերին մինչև ժամը 17:30։